ղիղն ասած, իմ հիացմունքը նոյնպէս չափ չունէր: Ես առաջին անգամն էի տեսնում նրան այդ հագուստով, այդ զէնքերով, ձիու վրայ նստած: Ամեհի նժոյգը փռընչալով խաղում էր նրա տակին, ինչպէս մի սիրուն կաքաւ: Կարծես նա էլ էր զգում, նա էլ էր հպարտանում, որ իրան կառավարում է ամենաընտիրը գիւղի երիտասարդներից: Դեռ մի քանի րոպէ չէր անցած, որ աշխոյժից եւ ուրախութիւնից նրա բերանը եւ պարանոցը սկսեցին փրփրել:

Բաւական հեռու եկաւ նա մեզ հետ, մինչեւ գիւղը ծածկուեցաւ մեր աչքից եւ մենք կրկին մտանք լեռների մէջ: Ասլանը մի քանի անգամ խնդրեց, որ ետ դառնայ: Բայց նրան ծանր, խիստ ծանր էր բաժանուել մեզանից: Ճանապարհը այնքան նեղ էր, որ երկու ձիաւոր հազիւ մօտեմօտ կարող էին գնալ: Նա եւ Ասլանը գնում էին մեր առջեւից, իսկ ես եւ Ջալլադը հետեւում էինք նրանց: Ետեւից ես նկատում էի, որ նա լուռ էր եւ խիստ հազիւ անգամ էր խօսում: Ո՞վ գիտէ, ինչե՜ր էին անցնում այդ րոպէում նրա մտքով. ո՞վ գիտէ, ի՞նչ զգացմունքներ այնպէս թախծալի էին դարձրել նրա միշտ ուրախ դէմքը: Նրա նժոյգը նոյնպէս հանդարտուել էր եւ կարեկից էր եղած իր տիրոջ տխրութեանը: Երկու բարեկամներ, հոգով, սրտով եւ իրանց բոլոր մտքերով միացած բարեկամներ, այժմ պէտք է անջատուէին միմեանցից: Մէկը գնում էր հեռու, շատ հեռու, ծովերի եւ օւկիանոսների այն կողմը... Իսկ միւսը մնում էր Ռշտունեաց լեռների մէջ: Արդեօք ճակատագիրը մի անգամ եւս կը հանդիպեցնէ՞ր նրանց միմեանց հետ, թէ այդ անջատումը կը լինէր վերջինը եւ յաւիտենականը... Երեւի այդ միտքն էր այնպէս յուզում եւ ալեկոծում ոգելից երիտասարդի սիրտը:

Հասանք մի փոքրիկ ձորակի, որ գոգաւորուած էր լեռան գրկում: Բարձր ժայռից թափւում էր բիւրեղանման պարզ ջուր եւ, մի քանի քայլ հեռանալով, թաքչում էր ճոխ խոտաբոյսերի մէջ: Այդ ժայռից աւելի բարձր կանգնած էր մի մամռապատ խաչքար եւ լռութեամբ նայում էր դէպի ձորի խորքը: Ի՞նչ մի անցքի յիշատակարան էր այդ խաչքարը, ոչ ոք չգիտէր, միայն երբեմն յայտնւում էին նրա մօտ գիւղացի կանայք, խունկ էին ծխում եւ հեռանում էին: Մի մթին աւանդութիւն դեռ մնացել էր, թէ այնտեղ թափուել էր մի նահատակի արիւն, եւ այդ աղբիւրը գոյացել էր նրա մօր արտասուքից: Այդ խաչքարի ներքոյ նրանք ցած իջան ձիաներից: Ես եւ Ջալլադը նոյնպէս ցած իջանք, բայց չմօտեցանք նրանց: Չկամեցանք խանգարել նրանց հոգեկան յուզմունքը, չկամեցանք ականատես լինել նրանց բարեկամական արտասուքին, չկամեցանք լսել նրանց փոխադարձ խոստումները: Այդ բոլորը այնքան անմերձանալի, այնքան սուրբ, այնքան նոիրական էին, որպէս այն մամռապատ խաչքարը, որ վերեւից, իբրեւ լուռ վկայ, նայում էր նրանց